«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության,նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը:

Դաստիարակ՝ Օվսաննա Գրիգորյան

Մանկապարտեզ՝ « 127 » ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

- Ներածություն
- Հետազոտության նպատակը
- Հետազոտական աշխատանքի ընթացքը
- .Առաջին գլուխ՝ տեսաբանների տեսաուղղերձներ
- .Երկրորդ գլուխ՝ պարապմունքի պլանը
- Մեթոդիստի դիտարկումներ
- Եզրակածություն
- Գրականության ցանկ

.

.

Ներածություն

<<Անձի գործունեության հաջողությունը տարբեր ոլորտներում որոշվում Է Կարողունակությունների զարգացման խորությամբ: Ահա ինչու անձի բոլոր Կարողությունների և ընդունակությունների բազմակողմանի զարգացումը գեղագիտական դաստիարակության հիմնական խնդիրներից է ու դրա վերջնական նպատակը>>:

Բ.Մ.Նեմենսկի

Նկարչությունն առաջին գեղարվեստական գործունեությունն է, որով երեխան զբաղվում է գիտակցաբար և ինքնուրույն: Սա պարզապես զվարճալի չէ,այլ բարդ գործընթաց է ,որի ընթացքում մտավոր պատկերին կամ զգացողությանը տրվում է տեսանելի ձև:Նկարչությունն անհրաժեշտ է երեխաների լիարժեք զարգացման համար: Վաղ տարիքում նկարչությունը նպաստում է ձեռքերում բարակ շարժիչ հմտությունների զարգացմանը:

Նկարչության ընթացքում ներգրավված են շարժիչային,տեսողական,մկանային և շոշափող անալիզատորները,զարգանում են ձեռքի և աչքերի համակարգումը,հիշողությունը և կենտրոնացումը:Նկարչությունը խթանում է մանկության ընակլման զարգացումը՝ երեխային ստիպելով ուսումնասիրել պատկերվող առարկաները և դրանցում նոր որակներ հայտնաբերելը,որոնք նախկինում

չի նկատվել:Վերապատրաստվում է օբյեկտը դիտելու և վերլուծելու կարողությունը,ինչը նույնպես նպաստում է մտածողության զարգացմանը,քանի որ բոլոր մտավոր գործընթացները փոխկապակցված են և փոխադարձ ազդեցություն ունեն միմյանց վրա: Այսպիսով երեխայի նկարներից կարելի է եզրակացություններ անել շարժիչ հմտությունների ու հետազոտության զարգացման վրա: Նկարչությունն ազդում է խոսքի զարգացման վրա:Վաղ տարիքում երեխան նկարելիս արտասանում է,երգում է իր գործողությունները: Շատ կարևոր է ուշադիր լսել երեխային՝ նկարները նկարելու մասին:Առաջատար հարցեր տալ:

.Հետազոտության նպատակը

Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը:

Եթե ես կարողանամ սաների մեջ առաջացնել նախաձեռնողականություն, ինքնուրույնություն,աշխատելու ցանկություն նաև նպաստեմ հուզական ոլորտի զարգացմանն ու զգայական փորձի հարստացմանը ապա կունենամ ավելի նախաձեռնող,ստեղծագործական զարգացած միտք,ճաշակ գունազգացողություն ունեցող երեխաներ:

.Հետազոտական աշխատանքի ընթացքը

Ուսումնասիրել եմ Բ.Մ. Նեմենսկու եզրակացությունները:Ծանոթացել եմ Ի.Դ Զապորոժեցի Գեղարվեստական դաստիարակության սահմանումներին: Ծանոթացել եմ նաև գիտամեթոդական հանդես <<Նախաշավիղ>>ամսագրին: Համակարծիք եմ Ն.Ն.Նեմենսկու ,Ե.Մ. Տորոշիլովայի,Վ.Ն.Շացկայի կարծիքի հետ,որ գեղագիտական դաստիարակությունը Նախադպրոցականի անձնային որակների կայացման և տվյալ բնագավառի մանկավարժների դաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմքն է:

Ե.Ա.Արկինը հետևյալ կերպ է բնութագրում երեխաների կատարած համեմատությունները:<<Համեմատելու միջոցով նա կարծես թե առարկաները դասավորվում է ավելի խիստ գույներով,դարձնում է իր համար ավելի տեանելի,կոնկրետ և վառ,միավորելով տալիս է անսովոր տեսք և այդ ուղիով սնում իր զգացմունքայնությունը,երբեմն այդ համեմատությունները ապշեցնում են իրենց օրիգինալությամբ անսպասելի արդյունքով>>[1]

1)Տես-<<նկարը որպես երեխայի էսթետիկական դաստիարակության և լեզվի զարգացման միջոց>>Երևան 1974 էջ 18

Ոգեշնչվել եմ<<Արվեստի գեղագիտական լիարժեք ըմբռնումը ակտիվ պրոցես է դեռ ավելին՝ կարողություն է, որը պետք է ուսուցանել>> 2 (Բ.Մ.Տեպլով) մտքից և օգտագործել աշխատանքում:

Տես<<նկարը որպես երեխայի էսթետիկական դաստիարակության և լեզվի զարգացման միջոց>> Երևան. 1974 էջ 6

Տեսական մաս

Պլանավորել եմ և անցկացրել պարապմունքի կուրսեր 2-րդ խմբում՝ կերպարվեստ մեթոդիկայից :Անցկացրել եմ ***ԽԻԿ***-ով:

Իմ հետազոտության մեջ ներառված են այն մասնակիցների դիտարկումները,ովքեր դիտարկել են պարապմունքը :Ներկայացրել եմ նաև իմ կատարածի վերջնարդյունքը :

Նպատակը-Կարաղոնալ փուչիկը ինքնուրույն դիտարկել, գալ ինքնուրույն եզրահանգումների,ծանոթանալ տեսքին՝ տարբեր վիճակում: Կարողանալ փորձ կատարել փչած փուչիկով, տեսնել արդյունքը,բավականություն ստանալ դրանից: Կարողանալ մատիտով նկարել փուչիկ և փուչիկից կախված թել:

Անհրաժեշտ նյութեր- Տարբեր գույնի փուչիկներ,գունավոր մատիտներ.A4 թղթեր երեխաների թվով,նկարներ՝տարբեր տեսքի փուչիկներով,փչած փուչիկներ(կախված թելով):

Խթանման փուլ -Երեխաները նստած է կիսաշրջան:Առաջարկեցի մոտենալ մահճակալներին և գտնել անակնկալը,որ թաքցրած է անկողնում:Մոտեցան՝ փուչիկ գտան (առանց փչել): Հետաքրքրություն առաջացրեցի գտած փուչիկի շուրջ:Առաջարկեցի ուսումնասիրել:Անել այն,ինչ կարող են անել փուչիկի հետ:Փչեցին,քաշեցին,ծակեցին,ծակած փուչիկը չփչվեց,մեկը կարողացավ փչել մյուսը ոչ,փոխանակեցին ընկերոջ հետ գույնի համար (նախընտրած):

Իմաստի ընկալում Սեղանները երկու շարքով դրված են:Սեղաններին գունաոր մատիտներ,A4 ֆորմատի թղթեր երեխաների թվով:Սեղանների առջևի մասում գրատախտակ:Երեխաներին առաջարկեցի նստել սեղանների շուրջը:Նստեցին դեմքը դեպի գրատախտակը:Ցուցադրեցի մի քանի նկար՝ (տարբեր) փուչիկ կախված թելով:Հիշեցրի մատիտի ճիշտ բռնելու ձևը:Նկարեցի փուչիկ ՝ թելը կախված:

Ներկեցի համաչափությունն ու ուղղությունը պահելով՝ առանց եզրագծերն անցնելու:

Ցուցադրեցի նաև փչած փուչիկ թելով ,որը մի քանի անգամ շփելով պատին՝ ամրացավ պատին:Առաջարկեցի աշխատել:Երեխաները աշխատեցին իրենց սեղանների շուրջը:

Կշռադատման փուլ Աշխատանքը ավարտելուց հետո երեխաները բերեցին աշխատանքները: Իմ օգնությամբ ամրացրեցինք տեսանելի տեղում: Բացատրեցի, որ եկել ենք խանութ,որտեղ փուչիկներ ենք վաճառում:

Հարց: Ինչպիսի փուչիկներ ենք տեսնում

Պատասխաններ ՝ Կապույտ, մեծ, փոքր,կարմիր,պայթած որովհետև ամբողջը կապույտով խզբզած է,սիրտ,թելը կախված է,կանաչ,դեղին,շատ փուչիկներ, մեկ փուչիկ:

Առաջարկեցի խախալ <<Փուչիկ>>երաժշտական խախը:Մինչև շրջան կազմելը նկատեցի,որ երեխաները մոտեցան փչած փուչիկին և շփում էին պատին կպցնելու համար:Արդյունքը ուրախացրեց նրանց:Կար որ չստացվեց:Ավելի ուշ մոտեցավ խաղին: Պարապմունքն ավարտեցինք երաժշտական խաղով :

Կերպարվեստը նախադպրոցական տարիքի երեխաների գեղարվեստական դաստիարակության կարևորագույն միջոցներից է:

Աշխատանքի ընթացքում դաստիարակը կարծում եմ հասավ պարապմունքի նպատակին,որի ընթացքում խթանեց երեխանեի հետաքրքրությունը և երևակայությունը:Սովորեցրեց աշխատանքային միջոցներից ճիշտ օգտվելու և աշխատելու ձևերը: Զարգացրեց աչքի և ձեռքի փոխհամագործակցությունը: Ձևավորեց կոկիկ աշխատելու կարողություն:

Պարապմունքի ընթացքում սաները իրենց զգում էին ազատ,անկաշկանդ,քանի որ ողջ ընթացքում դաստիարակը կարողանում էր հմտորեն պահպանել պարապմունքի հետաքրքրությունը :ԵՎ ձևերի և միջոցների բազմազանությունը նոր խնդիր է առաջ բերում և ստիպում փոքրիկին հաղթահարելու հանդիպող խոչընդոտները, խթանելով երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացումը:Ինչպես ասում է Ադոլֆ Դիստերվիգը <<Կրթությունը գիտելիքների քանակ չէ,այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի,ինչ գիտես>>Կարծում եմ այս թեման՝<<Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականաության կրթության մեջ և միտված է մի շարք խնդիրների լուծման:

Նկարչությունն երեխաներին հնարավորություն է տալիս խաղալով ծանոթանալ պարզագույն նյութերի տեսակներին և դրանց հատկություններին:

Երեխան մտածում է, որ իր կատարած աշխատանքն ամենալավն է ու գեղեցիկը: Երեխային հետաքրքրում է ոչ միայն աշխատանքի ընթացքը, այլև վերջնական տեսքը և դաստիարակի խրախուսական խոսքը:Սակայն ինչպիսին էլ լինի ստացված պատկերը,միևնույն է, երեխայի կողմից կատարած աշխատանքն իր իսկ զգայական ընկալման վերարտադրումն է,որն առաջին հերթին ուրախություն և հրճվանք է պարգևում հենց իրեն

Եզրակացություն

Այսպիսով՝ վաղ տարիքում նկարչությունը նպաստում է բարակ,շարժիչ հմտությունների զարգացմանը: Ներգրավված էին շարժային , տեսողական, մկանային և շոշափող անալիզատորները,զարգանում են ձեռքի և աչքերի համակարգումը,հիշողությունը և կենտրոնացումը:

Երեխան շոշափեց, հետազոտեց,փորձեց հասկանալ ինչ կարող է անել դրանով և ինչ ստացվեց փորձի արդյունքում :Փորձից ձեռք բերած գիտելիքը ավելի մնայուն է և գործնականում կիրառելի:Ստացված փորձի արդյունքում առաջացավ նորից ցանկալի արդյունքին հասնելու ցանկություն:Սեփական փորձից ստացած արդյունքն ավելի մեծ բավականություն պատճառեց երեխային:

Նկարելիս օգտագործեցին հիմնական գույները:Ամրապնդվեց գույների իմացությունը:

Աշխատանքը ավելի նպատակային լինելու համար պետք է ճիշտ համադրել ուժեղ և թույլ կողմերը,որպեսզի ստացված արդյունքը գոհացնի բոլորին՝հատկապես առանձնահատուկ մոտեցում պահանջող երեխաների դեպքում:

Գրականություն

1. Неменский Б.М. мудрость красоты/ Б. М. Неменский М: Искусство 1987 г.

2. Шацкая В.Н.Общие вопросы эстетического воспитания 1987 г.

3.Գիտամեթոդական հանդես՝ Նախաշավիղ 2. 2013